

հրգեհներէ զգուշանալու համար՝ Յուստինիանոս բնաւ աստաղձի փայտէր չգործածեց, մարմարիոնէ երկայն տախտակներով դրցել առևաւ կամարը:

Երբոր Ս. Ասփիայ տաճարն աւարտեցաւ, ուզեցին հրաշալի շքեղութեամբ մի զարգարել նորա բոլոր արտաքին երեսը, բոլոր օրմերն թանկագին մարմարիոններով զարդարուած էին, խոյակներն և պսակներն ուկեզօծուած, կողմէն նական թեու կամարներն մամածեփ, գմբէթն աելի ևս զեղեցկացած ու կեզօծ և գունաւոր միւսիոնավէ: Ընդհանրապէս բոլոր նկարներն ուկի յատակի վրայ էին, որ բնադրոշմ մ'է բիւզանդական բազմագոյն ճարտարապետութեան. որոնք կը գոռոին նաև Գաղղիոյ եկեղեցեաց մէջ ի գարս գլուխ և գլուխ մանաւանդ Սիկիլիոյ և խոալիոյ մէջ:

Բաց աստի ի Ս. Ասփիա կար ամբաւ ճոխութիւն թանկագին անօթոց և բազմաստեղն ճրագրանաց: Տիւեց 16 տարի Ս. Ասփիայ տաճարին շինութիւնն, կայսրն ուզեց որ նոր շէնքին նաւակաստիքն մեծահանգիս կատարուի. և ինքն իսկ զարմանքով գոշեց. « Փառք Աստուծոյ, որ արար զիս արժանի, կատարել զայս գործ, յաղթեցի քեզ, Ասղոմնի » :

Շարայարելի

## ԻՇԽԱՆԱՑ ԿՂԶԻՔ

(Տես յէջ 340)

**Ա**ԱՅԻ 4. 808, Նիկեփոր Ա. Լողոթէտր, նոյնը՝ որուն մահը պատմեցի, Պոլղարաց որոպայթի մը մէջ, և որ զեռ նոր գահէն վար առեր էր իրէնէ կայսրուհին, ձիով պարտելու ատեն Քաղկեդոնի շրջակայքը, ինկա ձիէն և ուրը կոտրեցաւ: Քանի մը շարաթ անկողինը մնաց, և զեռ նոր աղէկնալ սկսած էր, երբ որ ամառուան կիսուն յուղիսի 49ին գէշ լուրեր առնով այլայլեցաւ:

Նիկեփորս ժողովրդեան շատ ատելի եղած էր իր զրած ծանր հարկերուն համար. առէ օգուտ քաղելով զինուօրք՝ կայսր հրատարակեցին Արեւելեան կամ Անատոլիի ընդհանուր հրամանաստարը, միայն կապագովիկայ բանակը (<sup>1</sup>) մասնակից շեղաւ այդ ապստամբութեան: Այս մարդն էր Վարդան պատրիկը որ երևելի զօրավար մ'էր, և Թուլք կ'անուանէր:

1. ՈՐ ՀԱՅ գօրքերէ կազմեալ. էր:

Հայ էր ծննդեամբ (<sup>1</sup>), ինչպէս որ վարդան անունէն կը հասկըցուի, զոր վարտան կը հնչէին թոյները : Ազնուական ցեղէ էր, կարելի է Մասիկոն նեանց անուանի ցեղէն : Զօրքը զինքը շատ կը սիրէր իրեն պատերազմական և անձնական կատարելութեանցը համար : Կայսրութեան ամենէն գիտուն մարտագէտն կը սեպուէր, և Սարակինոսաց վրայ մեծ յաղթութիւն մը տարած էր : Կը կարծուի որ նախ չէր ուզած ապստամբիլ և վերջը զիշած էր իր զօրացը բռնազատութենէն : Զօրքը ձանձրացած ըլլալով Նիկեֆորոսի անգութ ազանութենէն, սպառնացան Վարդանայ զինքը մեռցնելու, թէ որ իրենց զլուի չկենար . բայց մէյմը որ ոսր ելաւ, իշխանութիւնը իրեն անուշ եկաւ :

Քիչ մը տեսն կարծեցին որ կայսերական պալատը ուրիշ տէր մը պիտի տեսնար : Վարդան սուս տեղեկութիւններէ խարուած, որ քաղաքական պատերազմի աղէտներուն լիմի կըսպանար, կարծեց որ կոստանդնուպոլսեցիք լողոթէախն լուծէն ձանձրացած, իրեն գալուն կ'սպասէին, որ գոները բանան, և ատեցեալ կայսրը կ'ինկնար աթոռէն առանց ամեննէին կաթիլ մը արին թափուելու : Փափէփայ Ֆիլոմէլիոն (Արքէնիր) քաղաքէն ելլեւով, որ որ կայսր հրատարակուած էր, դէպ 'ի մայրաքաղաքը սկսաւ քալել, շուս անցնելով Փոփէփայէն և թիւթանիայէն . ամեն տեղ ժազովուրզը զինքը սիրով կ'ընդունէր, որուն աշըքը շլացընելն զիւրին էր : Նիկոլիփայէն (Իզնիմիտ) անցաւ և եկա Խրիստուպոլսայ (Սկիւտար) զիմաց բանակն զրաւ : Հոն շուս իմացաւ խարուիլը . Վարդան կարծեց որ այն մեծ արուարձանին բնակիչը իրեն առջել պիտի վազէին : Անանկ չեղաւ, գոները զոց մացին և Խրիստուպոլսայ միայն պարսաւաւորներն և ալեղնաւարներն տեսաւ, որք պարսպին աշտարակաց վրայ շարուեր էին : Միւս կողմանէ լրտեսներն կը հասաւատէին որ կոստանդնուպոլիս զօրքով կը լեցուէր, և Նիկեֆորոս կը պատրաստուէր Վասփորոնը անցնիլ, որ Անատոլցոց բանակին վրայ յարձակի :

Վհասութիւնը տիրեց վարդանայ և իր կողմանցաց վրայ, աննոցմէ երկուքը որ ամենէն աւելի ապստամբութեան յորդորեր էին զվարդան, և որք անսովոր պատահմամբ երկուքն ալ վերջը կայսերական աթոռն պիսի ենէին, Միհրայէլ կակազն, և Լևոն Հայկազն, վասութեամբ տէրերնին ձգեցին և Նիկեֆորոյ կողմը անցան : Յայտնի եղաւ խնդիրն . Վարդան խորին վշտիւլի յասմամբ անոնց դէմ, որոնք անխոնեմութեամբ զինքն այնպիսի վուանգաւոր դործի մը մղեր էին, Սկիւտարի բանակը վերցուց, և տարաւ իր զըժուն զօրքերը դէպ 'ի թիւթանիոյ դաշտերը, Ոլիմպոս լերան հիսխասային կողմը : Մալակինէ պատիկ քաղաքը կեցաւ, որ Հրինզակոս գետէն շատ հեռու չէր, թիւթանիոյ և . բնիկն Ասիա զաւառին սահմանաբաժնին վրայ : Խեղճը տակն ու վրայ, մտածեց ծածուկ հաշտութեան լուր խարել լողոթէախն . բայց

1. Այս է Վարդան Բ. ըստած կայսրն, որուն ընդարձակ և սրտաճմիկ պատմութիւն զրած է Հայրն Ամիշան, իր երկհատոր թուշիկ զրոց մէջ, Հատ. Բ. 351 :

շատ զգուշութեամբ պէտք էր ընել, վասն զի իւր զօրքերը իրմէն աւելի անյագ, կ'ուզէին յաղթելու և աւար առնելու բաղն փորձել . և կայսերական զօրքերուն փրայ նետուիլ, որ ամէն կողմանէ իրենց կը մօտենային: Վարդան զաղսուկ Նիկեփորին լուր խափեց, որ զէնքը վար կը գնէր, թէ որ կատարեալ ներումն չնորհէ իրեն և իրեն հետ եղողներուն:

Այս լուրն առածին պէս Լորդթէտ, թէպէտ որ չափ ալ չէր ուզեր ցուցրնել, շատ կը վախնար այն կորիճ մարդուն ապատամբութենէն, շատ ուրախացաւ և այն վայրկենէն իւր ընելիքը որոշց: Երգում ըրաւ որ ինչ որ Վարդան կ'ուզէր կը կատարէր. և Վարդանայ սիրուր հանգարսեցնելու համար, կայսերական խօստումն վաւերացաւ Տարասիո պատրիարքին կոնդակին, և բարձրագյն պաշտօնէից ստորագրութեամբը: Նիկեփոր մինչեւ անդամ նամակին մէջ դրաւ, իբրև անբոնաբարելի զրաւ, իւր ոսկիկ խաչը որ վիզը կը կախէր միշտ:

Վարդան որոգայթին մէջ բնուեցաւ: Նոյն գիշերը միայն հաւատարիմ ծառայով մը թուլմաս անունով, որ Սլասոն էր ազգաւ, և բաղդաւոր զինուոր մը, և որ ինքն այ վերջը կայսորութեան ետևէ պիտի ըլլար և զառն աանջանցներով պիտի մեռնէր, զադունի վախսան բանակէն երկուքն ալ ձիարշաւ մինչեւ ծովեզերքը եկան, և հասան կիոս պզաի քաղաքը որ հիմայ կէմ լէիկ կ'անուանի. և փոքրիկ նաւակայք մ'է Մուսանիայի ծոցին խորը: Հոն էր Հերակլիսաի վանքը: Վարդան որ անշըրութեան կը վազէր, ինչպէս շատերը փառաց կը վազեն, փոթալով ասելի աշխարհը ձգելու, արթնցնել տուաւ մեծաւորը, ինք զինքը ճանչուց և ստիպեց զծերունին, որ անմիջապէս իրեն խուզումն հերաց տայ. վանահայը շփոթած, տարակուեցաւ, վերջը մերժեց երկնքի քաղաքացի մը ընել զինքն, անանկ աճապարանօք. այն ասեն Վարդան սուրբ քաշեց, բայց ոչ քահանայն զարնելու համար, այլ զողզոչին ձեռքով մը կորեց իր իրկայն և հիւսած մազերը, ինչպէս այն ասենուան սովորութիւնն էր: Ասանկ փոխաւծ զինուորական զգեստը հանեց, վանահայը քարձեալ չուզելով տայ կրօնաւորի հագուստը, հագաւ խեղճ զգեստներ, ինչ որ հոն գուան իրեն ապաւ, վերջը ծովեզերքը իջաւ ուր որ նաւակ մը կը սպասէր կայսեր կողմանէ դրկուած: Քանի մը ժամ վերջը երբեմն Սարակինոսաց յաղթողը՝ թրողի կղզին ելաւ:

Առաջ իւր յաջողութեան ատեն, Վարդան վանք մը շինել տուեր էր, հաւանականաբար զատ անոնցմէ, որոնց վրայ արգէն խօսեցայ. Երբորդ վանք մ'էր հետեաբար այս պզտիկ կղզոյն մէջ: Վիշ մը երկիր պահած էր բուրաբիջը, և համեստ բնակարան մը, թերևս պզտիկ խցիկ մ'ալ: Երբոր սահմանապիսուն վրայ անդադար պատերազմներէն կը հեռանար, ուր իրեն զըսնուիլը պէտք չէր ըլլար, կը սիրէր հանգիստ օրեր անցընել կրօնաւորաց քով, և այս նոր կինկիննասոսը, ինքը կը մշակէր պարտէզը: Ի բնէ այ կը սիրէր քաշաւած կեանքն, անոր համար ծանր չեկաւ իրեն աշխարհն ձգել, երբոր տեսաւ որ պէտք էր անիրաւ պատերազմ մ'ընել, անպատմելի առախութեամբ և գոհ սրտիւ շանքին մէջ ուաքը դրաւ: Բարեսիրս կրօնաւոր-

ները սիրով զի՞նքը ընդունեցան, և այն անգամ կանոնական խուզումն հերաց ընդունեցաւ, հազար կրօնաւորական կապայն և նախկին կայսերական զօրաց հրամանաւորան՝ եղաւ Ավալսա կամ Արա կրօնաւոր անարժան յանարժանուս։ իւր ժամանակը կ'անցընէր երկիր մշակելով և աղօթիւք։ առուսն կանուխ կը վազէր եռանդեամբ առաւօտեան ժամուն, վերջը բահը ձեւքը կ'երթար թրողիի քարուս երկիրը փորելու և մշակելու։

Շարայարելի

~~~~~

## Ա Ն Է Ծ Ք

(Տես յ էջ 391, Շար. եւ վերջ)

~~~~~

**Ս**ԱՀԵՑԱԻ գնաց տասը տարի յավտենականութեան անդունվը, բայց այս տասը տարուան ընթացքին մէջ Մալնաշլի երէցփոխանին պիտի անցածները՝ զարհութելի են։ Այն վայրկիանէն սկսեալ կորսնցուց սրտին հանգըստութիւնը, երբ ժողովրդապետին հետ աւրուելով, իւր ոխակալ վրէժը հանելու նպատակաւ, ժողովրդապետին վրայօց զիւաշունչ սուս լուրեր հանեց, սրով անեեղ քահանան յուսահատած, խելքը կորսնցուցածի պէս՝ թողաց իւր պաշտօնը և հեռացաւ անկէց՝ ուր որ ութը տարի անխոնչ աշխատութեամբ իրեւ քաջ հովիւ և այր ըստ սրտին Աստուծոյ, բոլոր ժողովրդան սէրը գրաւած էր, և գնաց քաշուեցաւ իւր ծնած քաղաքը՝ ազգականաց և բարեկամաց ծոցը ապասինելու։

Խողճմտանքը անպատմելի կերպով կը տանջէր Մալնաշիին սիրաը. ահաւոր երեցաւ իրեն քահանային անէծքը՝ ձանցաւ թէ ժողովրդապետը իրաւոնք ունէր, և անկողմնասէր ոգուով դործեց, քահանայական պարտքը կատարեց, երբ իւր ազգու պատճառապանութեամբ յաջուցուց այն օդիորդին զործը, որ ամուսնական լծոյ խոստմունքներէ մոլորելով, ամօթոյ և անպատութեան մէջ յի մնայ։

Ժողովրդապետին հեռանալէն չորս տարի ետքը՝ Գրիգոր Տոմինիկ, որ այն միջոցին խանութի աէր եղաւ, նշանուեցաւ երէցփոխանին Մարգարիտա զըստերը հետ։

Թէ և պատինին հանդիսաւոր կերպով կատարուեցաւ, բայց եկեղեցիէն տուն դառնալու ժամանակ, հարսննորաց կառքին ձիերը կատղելով, անսնց զո՞ն եղաւ հարսին 48 տարեկան պատի եղբայրը Ստեփան, զոր մեռած տուն բերին՝ զրուխը բալորովին ջախջախած, և մարմինը արինլուայ զարձած։ Այլ կրնայ երեակայել ամէն մարդ ծնողաց և ազգականաց ցաւն ու կսկիծը ի մահ իրենց սիրելի որպւյն։ Հարսնատունը մեռելի առւն զարձաւ։